ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի

և

Տեսական ֆիզիկայի ասիական-խաղաղօվկիանոսյան կենտրոնի միջև գիտատեխնիկական համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) և Տեսական ֆիզիկայի ասիական-խաղաղօվկիանոսյան կենտրոնը, Փոհանգ, Կորեա (այսուհետ՝ Կենտրոն)՝

- **հաշվի առնելով** երկուստեք կարևոր նշանակություն ունեցող ոլորտներում գիտական հետազոտությունների իրականացման ուղղությամբ Կողմերի երկկողմ հետաքրքրությունը,
- **գիտակցելով** երկկողմ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում միջազգային համագործակցության կարևորությունը,
- **ցանկանալով** փոխադարձ հիմունքներով խթանել սույն համագործությունը,

համաձայնեցին հետևյալի շուրջ.

Հոդված 1

Կոմիտեն և Կենտրոնը (այսուհետ՝ միասին՝ Կողմեր) կհամագործակցեն գիտահետազոտական գործունեության շրջանակներում՝ երկկողմ գիտական հետաքրքրությունների հիման վրա սահմանվելիք ոլորտների և հարակից թեմաների ուղղությամբ:

Յուրաքանչյուր երկու տարին մեկ Կողմերը կվերանայեն սույն Փոխըմբռնման հուշագրի (այսուհետ՝ Հուշագիր) շրջանակներում իրականացվող համագործակցությունը:

Հոդված 2

Վերոնշյալ համագործակցությունը կարող է իրականացվել հետևյալ ձևերով.

- համատեղ գիտաժողովների, աշխատանքային հանդիպումների և դպրոցների միջոցով իրականացվող գիտահետազոտական գործունեություն,
- գիտատեխնիկական անձնակազմի փոխանակում,
- գիտատեխնիկական տեղեկատվության փոխանակում:

Հոդված 3

Վերոնշյալ համագործակցության ֆինանսավորման կարգն ու պայմանները ենթակա են սահմանման Կողմերի միջև ստորագրվելիք առանձին պայմանագրերով:

Հոդված 4

Սույն Հուշագրի շրջանակներում անձնակազմի, տեղեկատվության և նյութերի փոխանակմանն առնչվող հարցերը ենթակա են կարգավորման՝ համաձայն Կողմերի պետություններում գործող ազգային օրենսդրության, ինչպես նաև միջազգային այն համաձայնագրերի և պայմանագրերի դրույթների, որոնց մասնակցում է Կողմերից յուրաքանչյուրը:

Հոդված 5

Գիտնականների փոխանակման դեպքում, որպես կանոն, ճանապարհածախսը ենթակա է վճարման ուղարկող կրթական/գիտական հաստատության կողմից, եթե Կողմերն այլ կերպ չեն պայմանավորվում: Կեցության առնչվող ծախսերը հոգում է ընդունող կրթական/գիտական հաստատությունը՝ համաձայն ներքին կանոնակարգերի: Նյութերի փոխադրմանն առնչվող ծախսերը հոգում է ուղարկող կրթական/գիտական հաստատությունը, եթե Կողմերն այլ կերպ չեն պայմանավորվում:

Հոդված 6

Սույն Հուշագիրը կնքվում է չորս (4) տարի ժամկետով: Հուշագրի վավերականության ժամկետը ինքնաբերաբար կերկարաձգվի հետագա չորս (4) տարիների համար, եթե Կողմերից որևէ մեկը սույն Հուշագրի գործողության ժամկետի ավարտից վեց ամիս առաջ մյուս Կողմին գրավոր չծանուցի այն դադարեցնելու իր մտադրության մասին:

Սույն Հուշագիրը կարող է լրամշակվել և փոփոխվել Կողմերի գրավոր համաձայնությամբ՝ առանձին արձանագրությունների միջոցով: Նշյալ արձանագրությունները կկազմեն սույն Հուշագրի անբաժան մասը:

Սույն Հուշագրի մեկնաբանման և կիրառման ընթացքում ծագած վեճերը և տարաձայնությունները կլուծվեն խորհրդատվությունների և բանակցությունների միջոցով:

Սույն Հուշագրի գործողության ժամկետի ավարտի կամ դադարեցման դեպքում Կողմերը կշարունակեն կատարել Հուշագրի՝ ուժի մեջ լինելու ժամանակահատվածում կնքված պայմանագրերի դրույթները, եթե Կողմերն այլ կերպ չեն պայմանավորվում:

Սույն Հուշագիրը կատարված է Երևանում նոյեմբերի 23-ին, 2 բնօրինակից՝ յուրաքանչյուրը հայերեն, կորեերեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Ի հավաստումն սույն Հուշագրին իրենց համաձայնության համապատասխան պաշտոնյաները ստորագրեցին սույն Հուշագիրը.

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից	Տեսական ֆիզիկայի ասիական-խաղաղօվկիանոսյան կենտրոնի կողմից
Նախագահ	Նախագահ
Սամվել Հարությունյան	**Բում-Հուն Լի**